քելոց ձերոց, որ ի կողմանս այսոսիկ կան եւ մնան, եւ նոքայ բարւոք զիտեն զեղանակ եւ զկերպն, թէ որպէս պարտ է զրել առ ձեր բարձրութիւնդ: Վասն այսորիկ աղաչեցի զնոսա, զի փոխանակ իմ զրիցեն: Սակս որոյ եղի ի ձեռս նոցա զքարտէզս զերկուսն ի Ակոռ կաթուղիկոսէն զրեցեալս, եւ միւսան ի արքեպիսկոպոսէն Դաւթի Զուղայեցւոյ հակառակ ինձ: Բայց ոչ ունէի զդիտաւորութիւն առաքելոյ զքարտէզս զայնոսիկ ձերում սրբութե(ան)դ. մի քարտէզ կաթուղիկոսին եղեւ ճղեցեալ յանհոդութ(են)է եւ ետ կոյս նորին բաղում տառիւք զրեցեալ: Սակայն ի նմայ է կնիք եւ բոլոր դեռաւորութի(ւ)ն նորին եւ թէ որպէս հալածէ զիս: Դ(ար)ձ(եա)լ ճանաչեսցեն բարձրութի(ւն)ք ձերք ի քարտիզացն յայնցմանէ, զի ճշմարտութիւնն. զոր առ ի ոչ ծածկիցեմ եւ ստոյգ է, զի ամ(ենայն) տեղիս, եթէ հրապարակաւ, եւ թէ յանկեան ուրեք միշտ շընորհօքն ա(ստուծո)յ եւ օգնականութ(եամ)ք աղօթից ձերոց զճշմարտութիւնն Հռոմայ եկեղեցոյն ուսուցի եւ քարոզեցի, եւ զբաղումս առ այս հաւատս ածի դաւանութ(եամ)ք նոյնոյ եկեղեցոյն յաղագս այսորիկ ի քաղաքէ քաղաք հալածեցայ եւ մանաւանդ ի Թարվէզ քաղաքիս: Այլ ա(ստուա)ծ արասցէ, զի մեծազոյն եկեսցեն ի վ(է)ր(ա)յ իմ, եթէ կամք իցեն նմայ սակս խոստովանութե(ա)ն ճշմարիտ հաւատոյ կաթուղիկէ Հռոմայական եկեղեցոյդ, զոր հանապազ դաւանեմ եւ ջանամ, զի այլք եւս դաւանիցեն: Արդ թողում, զի հայրքըն առաքեցեալք Կափուճինի ի այս Թարվէզ քաղաքիս բնակեալ, որք եւս այնպէս արդիւնաբար եւ շահաւէտութ(եամ)ք աշխատին յաղագս աճեցուցանելոյ զճշմարիտ հաւատն, եւ նոյն հարքն ծանուցանիցեն ձերում բարձրութե(ան)դ զիրացն այնոցիկ, որք պատահեցան ինձ: Մի ինչ ուրեմն ինձ մնաց, զի խնդրիցեմ ի բարձրութեա(ան)ց ձերոց: Այն է զի ի բաղում տեղիս, եւ ի զանազան ժամանակս բաղումք զան առ իս, որք զկնիք յորդորելոյ իմոյ զնոսայ առ ս(ուր)ք եկեղեցիդ Հռոմէական կամին միաւորիլ: Ցիշխանութի(ւն)ք, զորս առաքելոց ձերոց չնորհէք, ինձ եւս են հարկաւորք: Թէ առ արձակումն ի հերձուածողութենէ, եւ կազի ոպւս բէ սէբտայթիզ սիւէ fоատ տիս պէնսացիօնէս, յաղագս մեծազոյն աղատութե(ա)ն խղճի մտաց, եւ բարութե(ան) հոգոց: Արդ խնդրեմ ի բարձրութե(ան)ց ձերոց չնորհել ինձ զիշխանութի(ւն)ս զայսոսիկ խոնարհաբար եւ ջերմեռանդութ(եամ)ք յորժամ կամ եւ մնամ ձերոց բարձրութե(ան)ց:»

«Ի Թարւէզ քաղաքի
յաւուրն. Ի. եւ. Բ. (22)
Սեպտեմբերի
յամի ա(եառ)ն ՌՁՃՀ
եւ Թ. (1679)»

«Խոնարհագունեղ եւ Ջերմեռանդագունեղ ծառայ Բարսեղ վրդպ(զծաջինջ) վարդապետ:»

(Հաւատոյ Տարածման Ժողովի դիւան Congr. Armeno V. III էջ 199 ա. 199 բ. եւ200 ա.:)

Ուրեմն որեւէ տարակոյս չի մնար թէ Բարսեղ վարդապետ հաւատադարձ մըն էր եւ զրաղած էր լուսաւորչադաւան Հայոց մէջ Հռոմէադաւանութեան համար քարոզչութեամբ, որուն շահատակութեանց դէմ Յակոբ Զուղայեցին կը դիմէր իր հօտին պաշտպանութեան:

Մինչ Յակոբ Զուղայեցի Թաւրիզի ժողովուրդին կը զրէր Բարսեղ վարդապետի մասին եւ անոր այդ քաղաքէն արտաքսումը կը պահանջէր, ինքը այն ատեն կը դտնուէր Կ. Պոլիս: Բարսեղի դէմ նոյն իմաստով կը զրէր նաեւ Էջմիածնէն հոն դտնուող աթոռակալ Միքայէլ վարդապետ: Այս նամակն ալ այժմ կը պահուի Հաւատոյ Տարածման Ժողովին դիւանին մէջ, ուրկէ առնելով առաջին անդամ ըլլալով կը հրատարակեմ հոս ներկայացուած միւս անտիպ եւ մեր բանասիրութեան անծանօթ մնացած նամակներուն հետ:

Նամակին աջ անկիւնը կլոր կնիք մը Քի ԾՌ – ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԴԱՊԵՏ (փակագիր) – ԹՎՆ ՌՂԴ (1644)

«Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի ծառայ Միքայէլ վ(ա)րդապետ, աթոռակալ սրբոյ մեծի աթոռոյս Էջմիածնի: Յորմէ ժամանեալ հասցէ զիր ա(ւր)հ(ն)ութե(ան) եւ նամակ պահպանութե(ան) չնորհք ա-